Հաստատված է
«ՋԵՄՖԱԲ» ՓԲԸ Խորհրդի
11.09.2025 թվականի № 2/1 որոշմամբ

ՀՐԱՀԱՆԳ

«ՋԵՄՖԱԲ» փակ բաժնետիրական ընկերության
Ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող կամ պարունակող կամ այլ հիմքով
գաղտնի համարվող տեղեկությունների չհրապարակման մասին
(նոր խմբագրությամբ)

Ստորև ներկայացվող՝ «ՋԵՄՖԱԲ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող կամ պարունակող կամ այլ հիմքով գաղտնի համարվող տեղեկությունները հանդիսանում են Ընկերության բացառիկ սեփականությունը, դրանք տրամադրվում են Ընկերության հետ աշխատանքային և (կամ) գործնական (պայմանագրային, այդ թվում՝ քաղաքացիաիրավական) հարաբերությունների մեջ մտնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, կամ ծառայողական գործունեության բերումով հասու են դառնում Ընկերության աշխատակիցներին և նրանց կողմից ենթակա չեն հրապարակման վերջիններիս հետ կնքված ***աշխատանքային*** և (կամ) ***քաղաքացիաիրավական*** կամ ***ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող կամ այլ հիմքով գաղտնի համարվող տեղեկությունների չհրապարակման մասին*** պայմանագրերով սահմանված ժամկետներում:

Ընկերության Ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող կամ պարունակող կամ այլ հիմքով գաղտնի համարվող տեղեկություններ են՝

1. Ընկերության ղեկավար կազմի և աշխատակիցների բնակության վայրին ու անձնական կյանքին վերաբերվող տեղեկությունները.
2. Ընկերության անվտանգության ապահովման համակարգին վերաբերվող տեղեկությունները (առևտրային գաղտնիքի պահպանության կազմակերպման կարգն ու իրական վիճակը, անվտանգության ծառայության անցկացման կարգն ու իրական վիճակը, անցագրային համակարգը, ազդարարման համակարգը).
3. Ընկերության կառավարմանը վերաբերվող տեղեկությունները (կիրառվող կառավարման յուրահատուկ մեթոդների, առևտրային, կազմակերպչական, արտադրական, գիտական և այլ հարցերով Ընկերության ղեկավարման առանձին որոշումների ընդունման և իրագործման մասին տեղեկությունները).
4. Գաղտնի և (կամ) սահմանափակ թվաքանակով աշխատանքային կամ այլ խորհրդակցությունների վերաբերյալ տեղեկությունները (Ընկերության կառավարման մարմինների խորհրդակցությունների և նիստերի անցկացման փաստը, դրանց ընթացքը, քննարկվող հարցերը և կայացված որոշումները, դրանց արձանագրությունները).
5. Ընկերության հիմնադիր փաստաթղթերը.
6. Ընկերության գործունեությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերը.
7. Ընկերության պլանային փաստաթղթերը (ներդրումների պլանները, բիզնեսպլանները, առանձին արտադրատեսակների արտադրության ընդլայնման կամ կրճատման պլանները, դրանց տեխնիկա-տնտեսական հիմնավորումները).
8. Ընկերության ֆինանսական փաստաթղթերը (հաշվեկշիռները, հաշվապահական գրքերը, ֆինանսական գործառնությունները, միջոցների շրջապտույտը, բանկային հաշիվների վիճակը, իրականացվող գործառնությունները, շահույթի (վնասի) մակարդակը, գումարային պարտավորությունների առկայությունը, բանկային մարմինների հետ կնքված վարկային պայմանագրերը, վարկի վիճակը՝ ակտիվը և պասիվը, ֆինանսական գործունեության վերաբերյալ միացյալ տարադրամային և դրամային ամենամսյա, եռամս-

յակային, կիսամյակային, տարեկան և վերջին մի քանի տարիների հաշվետվությունները, առուծախի պայմանագրերը, որոնց արժեքը գերազանցում է 200,000 ՀՀ դրամը).

9. այն տեղեկությունները, որոնց գաղտնիությունը սահմանված է երրորդ անձանց և Ընկերության միջև կնքված գործարքներով, պայմանագրերով և (կամ) համաձայնագրերով.

10. արտադրանքի իրացման հեռանկարային շուկաների, նյութական միջոցների կամ հումքի և ապրանքների ձեռք բերման աղբյուրների, դրանց գների մասին տեղեկությունները (շուկայի ուսումնասիրության ընթացքում կիրառվող յուրահատուկ մեթոդները, շուկայական կոնյուկտուրայի իրական վիճակը և հետագա զարգացման հեռանկարների ուսումնասիրությունների արդյունքները, Ընկերության շուկայական քաղաքականությունը, վաճառքի իրականացման ընթացքում կիրառվող յուրահատուկ մեթոդները, առևտրային գործունեության էֆեկտիվությունը, հաշվարկների մեթոդները, արտադրանքի գնի մակարդակը և ձևավորման եղանակը, զեղչերի չափերը).

11. Ընկերության գործընկերների մասին տեղեկությունները (Հայաստանյան և արտասահմանյան պատվիրատուների, կապալառուների, մատակարարների, սպառողների, գնորդների, հովանավորների, միջնորդների և այլ գործընկերների վերաբերյալ համակարգված տեղեկությունները, գործընկերների հետ գործնական հարաբերությունների բնույթի և եղանակների վերաբերյալ տեղեկությունները, մրցակիցների մասին տեղեկությունները, ինչպես նաև Ընկերության գործընկերների կողմից տրամադրված բոլոր այն տեղեկությունները, որոնց հրապարակման համար նախատեսված են տույժեր).

12. գործընկերների հետ տարվող բանակցությունների վերաբերյալ տեղեկությունները (գործընկերների հետ նախապատրաստվող բանակցությունների և դրանց արդյունքների մասին տեղեկությունները).

13. ստեղծվող (ծնվող) գիտատեխնիկական նվաճումների մասին տեղեկությունները.

14. արտադրության վերաբերյալ տեղեկությունները (արտադրության կառուցվածքը, արտադրական հզորությունները, սարքավորումների տիպը և տեղաբաշխվածությունը, հումքի, նյութերի և պատրաստի արտադրանքի պաշարները).

15. Ընկերության ծրագրերի և նախագծերի վերաբերյալ ընդհանրացված տեղեկությունները (նպատակը, խնդիրները, ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալները, կատարողները, մասնակիցները, փուլերը, կառավարման համակարգը, սպասվելիք արդյունքները, ինչպես նաև ծրագրերի նախագծերի իրագործման ընթացքում մշակված վերլուծական նյութերն ու փաստաթղթերը).

16. Ընկերության աշխատակիցների կամ ներգրավված մասնագետների (կազմակերպությունների, փորձագետների) կողմից Ընկերության գործունեության ապահովման ուղղությամբ մշակված վերլուծական նյութերը և փաստաթղթերը.

17. այն տեղեկությունների ստացման աղբյուրները, որոնք հնարավոր չէ ստանալ բաց տեղեկատուներից և տեղեկատվական այլ փաստաթղթերից:

Սույն ցանկում չեն նշված այն տեղեկությունները, որոնց բաց տրամադրումը կարգավորված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ որոնք Ընկերության կողմից օգտագործվում են գովազդային նպատակներով:

Սույն հրահանգի դրույթները գործում են և պահպանում են իրենց իրավական ուժը նաև Ընկերության (Գործատուի) ու համապատասխան ֆիզիկական անձի (Աշխատողի) միջև կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա ձևավորված աշխատանքային հարաբերությունները դադարելու պահից հետո՝ նվազագույնը 5 (հինգ) տարի ժամկետով: